Ներդրումային նախագիծ

Իրականացնող կազմակերպություն

«Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ (ՏԶՀԿ)

Նախագծի անվանում

«Գեղարքունիքի մարզում գյուղական համայնքների բնակչության եկամուտների ավելացման մասնագիտական ուսուցման կենտրոնի ստեղծում»

Ներդրումային գրաֆիկ

Գործողություն	Ժամկետ	Ներդրում(ՀՀ դրամ)
Շենքի (ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոցի նախկին կաթսայատան շինություն 60 մ²) լրացուցիչ կառուցապատում 52մ² (հնարավոր է մակերեսի փոփոխություն վերջնական չափագրման արդյունքում), կապիտալ վերանորոգում ընդհանուր 112մ² (հնարավոր է մակերեսի փոփոխություն վերջնական չափագրման արդյունքում), և կահավորում՝ որպես ցուցադրական էներգոարդյունավետ շինություն և ուսուցումների իրականացման վայր:	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 2 տարվա ընթացքում	26 մլն.
	1-ին տարի (2022թ) Կառուցապատման իրավունքի ձեռքբերում և կառուցապատում	10 մլն
	2-րդ տարի (2023թ) Կապիտալ վերանորոգում և կահավորում	16 մլն

Նախագծի համառոտ նկարագրություն

Գեղարքունիքի մարզը համարվում է հանրապետության առավել աղքատ մարզերից մեկը: Այստեղ՝ Սևանա լճի ափամերձ համայնքներում մարդկանց հիմնական զբաղվածությունը դարեր ի վեր եղել է ձկնորսությունը, և մարդիկ չեն ունեցել կայուն եկմուտ ստանալու այլ հմտություններ: Եվ այժմ, երբ լճում ձկան արդյունագործական պաշարները գրեթե սպառվել են, համայնքներն հայտնվել են տնտեսական ճգնաժամի մեջ, տղամարդկանց մեծ մասը մեկնել է արտագնա աշխատանքի՝ ընտանիքի հիմնական հոգսը թողնելով կանանց ուսերին, որին գումարվում է նաև էներգետիկ աղքատությունը: Ուստի առաջարկվող ծրագրով «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ն ցանկանում է Գեղարքունիքի մարզի

Ծովագյուղ գյուղում ստեղծել համայնքային նորարարական ուսումնացուցադրական կենտրոն, որը կներառի բնական հողագործության, էկոտուրիզմի և էներգախնայողության դպրոց՝ ուսումնացուցադրական տեղամասերով: Կենտրոնը կծառայի Գեղարքունիքի մարզի գյուղական համայնքների բնակիչների և հատկապես գյուղական կանաց ու երիտասարդների գիտելիքների և հմտությունների զարգացմանը՝ ձկնորսությունից բացի եկամտի այլ հնարավոր ու կայուն աղբյուրների, այդ թվում բնական/օրգանական եղանակով և խելամիտ հողագործության, համայնքներում այլընտանքային տուրիզմի զարգացման, էներգոարդյունավետության թեմաներով, կտրամադրի անհրաժեշտ գործիքակազմ, տնկիներ ու սերմեր, ինչպես նաև կկազմակերպի գործնական ուսուցումներ ու կստեղծի միմյանց միջև փորձի փոխանակման հնարավորություններ, ցույց կտա՝ ինչպես արևային էներգիայի կիրառման և էներգոխնայողության արդյունքում նվազեցնել ապրանքի ինքնարժեքն ու ավելացնել եկամուտները՝ միևնույն ժամանակ անվնաս պահելով շրջակա միջավայրը: Կենտրոնը կաջակցի նաև բնակիչներին արտադրանքի բրենդավորման, մարքեթինգի և վաճառքի կազմակերպման գործում՝ օգտագործելով իր անդամների փորձագիտական ներուժը, գործընկերային կապերն ու ռեսուրսները:

Ծրագրի հիմնավորում

Գեղարքունիքի մարզը համարվում է հանրապետության առավել աղքատ մարզերից մեկը, ու դրա հիմնական պատճառը բնակլիմայական պայմաններն են, կամ դրանց վերաբերյալ ավանդական մոտեցումները: Այստեղ մարդկանց հիմնական զբաղվածությունը դարեր ի վեր եղել է ձկնորսությունը, և բնակլիմայական պայմանները մշտապես նպաստավոր չեն համարվել գյուղատնտեսության համար: Ու չնայած, որ մարզում արդեն տասնամյակներ շարունակ աճում են և կլիմային ադապտացվել են տարբեր պտղատու ծառեր ու հատապտղային մշակաբույսեր, այնուամենայինիվ այգեգործական մշակույթը զարգացած չէ և չի դիտարկվում որպես կայուն եկամտի աղբյուր: Էկոտուրիզմը, որպես այս համայնքների համար մեծ պոտենցիալ ունեցող եկամտի աղբյուր, ևս զարգացած չէ, բնակիչները չունեն Սևանա լիճ եկող զբոսաշրջիկներին ափամրձ տարածքներից համայնքներ ներգրավելու հմտություններ և մշակույթ: Եվ այժմ, երբ լճում ձկան արդյունագործական պաշարները գրեթե սպառվել են, համայնքներն հայտնվել են տնտեսական ճգնաժամի մեջ, տղամարդկանց մեծ մասը մեկնել է արտագնա աշխատանքի՝ ընտանիքի հիմնական հոգսը թողնելով կանանց ուսերին, որին գումարվում է նաև էներգետիկ աղքատությունը: Կանանց և երիտասարդների եկամտի հիմնական աղբյուրը հանդիսանում է աշխատանքը Սևանա լճի ափամերձ հանգստի գոտիներում, ինչը խիստ սեզոնային բնույթ է կրում՝ պայմանավորված նաև ջեռուցման շատ մեծ ծախսերով: Այստեղ ջեռուցման սեզոնը ձգվում է մինչև ինը ամիս, և եթե ՀՀ ավելի տաք տարածաշրջաններում մարդիկ տարեկան 4-5 ամիս ջեռուցման վրա ծախսում են իրենց եկամուտների գրեթե 50%-ը, ապա այս տարածաշրջանում դա տևում է 9 ամիս: Եթե սրան ավելացնենք նաև խիստ ցածր եկամտաբերությունը ավանդական գյուղատնտեսությունից և զբաղվածության այլ հնարավորությունների բացակայությունը, ապա ստացվում է, որ մարդկանց շատ մեծ մասը տարվա մեջ ինն ամիս իրենց եկամուտների 70 %-ից ավելը ծախսում են ջեռուցման վրա /մեր կողմից համայնքներում արված աղքատության և կարիքի

գնահատման արդյունքների համաձայն/: Էներգոխնայողության և էներգիայի վերականգնվող աղբյուրների մասին իրազեկվածությունը համայնքներում գրեթե զրոյական է:

Սակայն մյուս կողմից տարածաշրջանն ունի մեծ հնարավորություններ և մրցակցային առավելություններ՝ տրված հենց նույն բնության կողմից, որոնք, համապատասխան գիտելիքներ և հմտություններ ունենալու, ավանդական կարծրատիպերից հրաժարվելու և նոր գործելակարգ որդեգրելու դեպքում ոչ միայն կկրճատեն մարդկանց էներգետիկ ծախսերը, այլև զգալիորեն կավելացնեն եկամուտները, կնպաստեն գյուղական համայնքների կայուն տնտեսական զարգացմանը: Նշված հնարավորություններն են .

· մարզի բնակլիմայական պայմաններին արդեն ադապտացված թանկարժեք հատապտուղների և մրգերի բարձր բերքատվությունը,

· Սևանա լճի առկայությունը և էկոլոգիապես դեռևս մաքուր միջավայրը՝ որպես տուրիստական գրավչություն և օրգանական բերքի հնարավորություն,

· արևային օրերի շատ մեծ քանակը (որոշ տարածքներում տարվա մեջ մինչև 300 օր)՝ որպես այլընտրանքային էներգիայի և էներգոխնայողության հնարավորություն:

Գյուղատնտեսությունն ու գյուղական համայնքների զարգացումը, ինչպես նաև Էներգախնայողությունն ու վերականգնվող էներգետիկան հանդիսանում են ՀՀ տնտեսական զարգացման գերակա ուղղությունները և ընկած են պետական ռազմավարական ծրագրերի հիմքում, որոնցում կարևորվում է նաև վերոնշյալ թեմաներով բնակիչների գիտելիքների և հմտությունների, ինչպես նաև հնարավորությունների ավելացումը: Պատահական չէ, որ շատ միջազգային կազմակերպություններ ևս իրենց աջակցությունն ուղղում են այդ նպատակների իրականացմանը. Ինչպես օրինակ ԵՄ կողմից ֆինանսավորվող EU 4 CIVIL SOCIETY: Energy efficiency in Armenian Communities ծրագիրը, Համաշխարհային բանկի, Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի և այլ դոնորների կողմից ֆինանսվարորվող տարբեր գյուղատնտեսական և էկոլոգիական նախաձեռնություններ ու կրթական ծրագրեր: Հետևաբար առաջարկվող ծրագրով «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ն ցանկանում է Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ համայնքում ստեղծել համայնքային նորարարական ուսումնացուցադրական կենտրոն: Այն իր մեջ կներառի ժամանակակից էներգոխնայողության ստանդարտներին համապատասխան շինություն, որը ոչ միայն կծառայի որպես էներգոխնայողության օրինակ՝ իրազեկելով մարզի բնակիչներին էներգոխնայողության արդյունավետության ու ձևերի մասին, այլև կհանդիսանա օրգանական գյուղատնտեսության և էկոտուրիզմի դպրոց: Այն ամբողջովին կկահավորվի և կապահովվի անհրաժեշտ սարքավորումներով՝ դասընթացի մասնակիցներին մեկ կամ մի քանի օրով հյուրընկալելու համար, որի ընթացքում նրանք կսովորեն կայուն, օրգանական և խելամիտ գյուղատնտեսությանը, ագրո/էկո տուրիզմին, ինչպես նաև էներգոխնայողությանն ու էներգիայի այլընտրանքային աղբյուրների կիրառմանն առնչվող գործելակերպեր ու հմտություններ:

Մեր ունեցած փորձագիտական ներուժով, գործընկերային կապերով և շահագրգռվածությամբ կանենք հնարավոր առավելագույնը ոչ միայն ծրագրի հաջող իրականացման, այլ արդյունքները վերջնական նպատակին ծառայեցնելու գործընթացում:

Ծրագրից ակնկալում ենք ունենալ հետևյալ արդյունքները.

1. Մինչև 18-րդ ամսվա վերջը 112 մ² տարածքով ուսումնական շենքը (60մ2 առկա և 52մ2 նոր կառուցված(հնարավոր է մակերեսի փոփոխություն վերջնական չափագրման արդյունքում)) վերանորոգված է ժամանակակից էներգոխնայողության ստանդարտներին համապատասխան:

2. Մինչև 24-րդ ամսվա վերջը այն ամբողջովին կահավորված է և հագեցած անհրաժեշտ սարքավորումներով ՝ միաժամանակ մինչև 12 դասընթացի մասնակցի մեկ կամ մի քանի օրով հյուրընկալելու համար:

Այս ամենի առկայության պարագայում կենտրոնը հնարավորություն կունենա յուաքանչյուր ամիս ընդունել մինչև ութսուն կանանց և երիտասարդների ոչ միայն Ծովագյուղից, այլև մարզի այլ գյուղական համայնքներից, որոնց համար կկազմակերպի դասընթացներ և գործնական ուսուցումներ կանաչ/օրգանական գյուղատնտեսության, այլընտրանքային տուրիզմի և էներգոխնայողության թեմաներով, որտեղ գործնական պարապմունքների միջոցով ցույց կտա գյուղացիներին՝ ինչպես ճիշտ և արդյունավետ մշակել հատապտուղներն ու պտղատու ծառերը ՝ մեծ և ապրանքային տեսքով բերք ստանալու համար, ինչպես նոր եղանակով մշակել ավանդական տեսակները՝ ջանքերը նվազեցնելու և բերքատվությունն ավելացնելու նպատակով, ինչպես ժամանակին հավաքել, անմիջապես վերամշակել ու վաճառել բերքը, ինչ նոր և թանկարժեք տեսակներ կարելի է ադապտացնել մարզի բնակլիմայական պայմաններին, ինչպես լիճ եկող տուրստական հոսքերը ափամերձ հանգստի գոտիներից ներքաշել համայնքներ, ինչպես ավելացնել համայնքների տուրիստական գրավչությունը, ինչպես էներգետիկ արդյունավետության բարձրացման միջոցով իջեցնել ապրանքի ինքնարժեքն ու ավելացնել եկամուտը՝ միևնույն ժամանակ անվնաս պահելով շրջակա միջավայրը: Կենտրոնը մասնակիցներին կտրամադրի անհրաժեշտ գործիքակազմ, տնկիներ ու սերմեր, ինչպես նաև կստեղծի միմյանց միջև փորձի փոխանակման հնարավորություններ, կաջակցի գյուղական արտադրանքի ու ծառայությունների բրենդավորման, մարքեթինգի և վաճառքի կազմակերպման գործում՝ օգտագործելով իր անդամների փորձագիտական ներուժը, գործընկերային կապերն ու ռեսուրսները: Այս ամենի ազդեցությամբ յուրաքանչյուր տարի մինչև 20% կավելանան գյուղական կանաց ու երիտասարդների զբաղվածության հնարավորությունները և եկամուտները, կկրճատվի արտագաղթը: Ծրագիրը կունենա նաև բնապահպանական ազդեցություն՝ էներգախնայողության և արևային էներգիայի կիրառման ու այդ օրինակը տարածելու արդյունքում կունենանք ջերմոցային գազերի արտանետումների նվազում, մտածված և խելամիտ գյուղատնտեսությունը կկանխի հողերի դեգրադացիան մարզի տարածքում: Այլընտրանքային զբաղվածությունը լիճը կբեռնաթափի ձկնորսներից, ինչը կնպաստի ձկան արդյունագործական պաշարների վերականգնմանը և Սևանա լճի պահպանությանը:

Ծրագրի հետագա կայունության ապահովում

Ծրագրի կայունության հիմքերը կստեղծվեն ծրագրի արդյունքում:

· Ուսումնական շինության վերանորոգումը՝ Ժամանակակից էներգոխնայողության ստանդարտներով և ապահովվումը արևային էներգիայով մինիմալի կհասցնեն շահագործման ընթացքում անհրաժեշտ ծախսերը և երկարաժամկետ կայունության հիմք կհանդիսնան:

· Ուսումնական կենտրոնը համալրված կլինի անհրաժեշտ կահույքով և սարքավորումներով, և ՀԿ-ն կստանձնի պարտավորություն՝ դրանց խնամքով օգտագործման և երկարաժամկետ պահպանության համար:

· Մշակված կրթական մոդուլները և նյութերը կպահպանվեն ու մշտապես կթարմացվեն նոր դասընթացների և գործնական պարապմունքների ժամանակ արված նկարահանումներով՝ հետագա վիդեոդասերի համար:

· Կենտրոնը մշտապես կներգրավի տարբեր փորձագետների՝ ինչպես Հայաստանից, այնպես էլ արտերկրից, որոնք մի քանի օր կհյուրընկալվեն կենտրոնում՝ այդ ընթացքում իրականացնելով թրեյնինգներ մարզի բնակիչների համար կամավորական հիմունքներով: Փոխարենը կստանան փորձի փոխանակման և ամռանը մի քանի օր Սևանի ափին անցկացնելու հնարավորություն:

· Կենտոնում պարբերաբար կկազմակերպվեն մտագրոհներ համայնքի երիտասարդների ներգրավմամբ և կծնվեն նոր գաղափարներ ու ծրագրեր, որոնք կներկայացվեն տարբեր ներդրողների:

· Կենտրոնը համագործակցության հուշագրեր կստորագիր մարզի դպրոցների և մյուս ուսումնական հաստատությունների հետ՝ աշակերտների և ուսանողների համար պարբերաբար համատեղ ուսուցումներ և գործնական պարապմունքներ կազմակերպելու վերաբերյալ:

ՏԶՀԿ նախագահ՝

Մարտին Բաղեյան